ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

ՏԻՐԱՆ ԱՐՔ. ՆԵՐՍՈՅԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԱՅԻՆ ՁԵՒԱՎՈՐՄԱՆ ՎԱՂ ՇՐՋԱՆԸ ԵՒ ԱՐՄԱՇԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ) *

ՀՏԴ 2-9 *DOI: 10.52063/25792652-2023.2.17-38*

ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ
Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
samveldivanatun@gmail.com
ORCID: 0009-0004-9573-8071

Որո՞նք են քսաներորդ դարի հայ նշանավոր աստվածաբան Տիրան արք. Ներսոյանի վաղ գրվածքների հիմնական գաղափարները, ինչպե՞ս են դրանք ձևավորվել և ի՞նչ ձևով են առնչվում Արմաշի Դպրեվանքի ավանդությանը: Այս հոդվածի նպատակը տվյալ հարցերի պատասխանները հնարավորինս ուրվագծելն է:

Չնայած Տիրան արք. Ներսոյանի՝ որպես եկեղեցական գործչի հայտնի լինելուն, ինչպես նաև նրա մասին գրված հոդվածներին և գրքույկներին, այդուհանդերձ նրա գաղափարներն ու արմաշականության հետ ունեցած հարաբերություններին վերաբերող հարցերը դեռևս համապարփակ ուշադրության չեն արժանացել: Այդ անելու համար այստեղ վերլուծական մեթոդով փորձ է արվել վերընթերցել Տիրան սրբազանի վաղ գրվածքները, մատնանշել արմաշական ավանդության հետ ունեցած փոխհարաբերությունները ու կրած ազդեցությունները և հիմք նախապատրաստել այս ոլորտում հետագա ուսումնասիրությունների համար:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ Տիրան արք. Ներսոյանի վաղ գրվածքների և հետագա հոդվածների և ուսումնասիրությունների մեջ առանցքային են արմաշական ավանդությունից ժառանգված և վերարծարծված թեմաները: Այդուհանդերձ, շարունակելով արմաշական ավանդությունը՝ երջանկահիշատակ սրբազանը հիմնականում արմատապես վերանայել է արմաշական հայտնի ուղղությունների բովանդակությունը և մոտեցման ձևերը՝ հաճախ քննադատելով և սուր հակադրության մեջ մտնելով արմաշական հայտնի մտավորականների հետ:

Հիմնաբառեր՝ *Տիրան արք. Ներսոյան, Բաբկեն կթղ. Կյուլեսերյան, Թորգոմ պտք. Գուշակյան, արմաշականություն, վիպապաշտություն, եկեղեցաբանություն, պատմական քննադատություն, քաղաքականություն, կանոնագիտություն:*

* Հոդվածը ներկայացվել է 19.05.2023թ., գրախոսվել՝ 21.07.2023թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2023թ.:

Նախաբան

Տիրան արք. Ներսոյանի (1904-1989) կենսագրական տվյալները վաղուց ի վեր հայտնի են (Մանուկեան 7-24; Ղազարեան 135-161): Բազմիցս շեշտվել է, որ նա աշակերտել է արմաշական մեծանուն ուսուցիչների, ուսանել է անգլիական անվանի համալսարաններում, ընտրվել է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ, Երուսաղեմի հայոց պատրիարք, ճանաչված հեղինակություն է եղել միջեկեղեցական շրջանակներում, հիմնադրել է Ս. Ներսես ճեմարանը և այլն: Կենդանության օրոք և հետմահու նա գնահատվել է ժամանակակից անվանի հոգևորականների, բարերարների և մտավորականների կողմից: Այդուհանդերձ, նրա վերաբերյալ հոդվածներում և գրքույկներում շարադրված են գլխավորապես կենսագրական տվյալներ և տպավորություններ, բայց ոչ վերլուծություններ նրա գաղափարային ձևավորման, կրած ազդեցությունների և հակադրությունների մասին (բացառություն կարելի է համարել Ռ. Ըրվինի Տ. Ներսոյանի արխիվային ժողովածուի համար գրած նախաբանը (The Unpublished VI-XVIII), որտեղ որոշ նկատումներ կան վերջինիս ոճի և մոտեցումների վերաբերյալ: Հատվածական անդրադարձներով և հպանցիկ է Տ. Ներսես ավ. քհն. Ներսեսյանի պատրաստած ժողովածուում Տիրան արք. Ներսոյանի աստվածաբանության մասին ենթաբաժինը (Nersoyan, *Armenian Church* 22-46; 374-385): Նշանակում է, որ նրա գաղափարային ձևավորումը և դրա միջավայրը ուսումնասիրման համար հիմնականում բաց են մնում: Իհարկե, կան հանգամանքեր, որոնք ինչ-որ չափով արդարացնում են երջանկահիշատակ սրբազանի աստվածաբանական գործունեության շուրջ առավել ընդարձակ հետազոտությունների բացակայությունը: Նախ՝ նրա մահվանից ի վեր ոչ երկար ժամանակ է անցել, և օբյեկտիվ կարծիք արտահայտելը նրա հիմնական հայացքների մասին այն դեպքում, երբ դրանց շուրջ մինչև վերջերս թարմ էին բանավոր և գրավոր հակասական, չպարզորոշված տեսակետները, այնքան էլ դյուրին չէ: Մյուս կողմից՝ անխոնջ ընթերցող ու ուսումնասեր Տիրան արք. Ներսոյանի գաղափարային ձևավորման նույնիսկ վաղ շրջանը ամփոփելը հեշտ չէ՝ հաշվի առնելով նրա բազմագիտակությունը և այն ընդարձակ գիտակարգերը, որոնցում նա զգալի ներդրում է ունեցել (արդարացի է նաև նկատել, որ հաշվի առնելով ԺԹ և Ի դարերի հայ աստվածաբանների կամ եկեղեցական գործիչների մասին արված հետազոտությունների սակավությունը՝ հստակ է՝ Տիրան արք. Ներսոյանն ամենաանտեսվածը չէ): Այս հոդվածը չի գալիս ամբողջապես լրացնելու եղած բացը. այն համեստ փորձ է նորովի ուրվագծելու Տիրան արք Ներսոյանի ուսումնասիրությունների հիմնական շրջանակը և անդրադառնալու արմաշական աստվածաբանական-գրական ավանդության՝ նրա կողմից վերանայմանը:

Արմաշականության երկու շրջաններն ամփոփ. Օսմանյան կայսրության «Կակաչների դարաշրջանում» (ԺԸ-ԺԹ դդ., երբ Եվրոպայում առաջադիմող լուսավորությունը հայ ուսումնականների և Օսմ. կայսրության տարբեր խողովակների միջով տարածվում էր թրքահայության մեջ) Արմաշի վանքի հայ ուսյալ հոգևորականների կողմից եվրոպական լուսավորական մի քանի ուղղությունների և գործիքների մեծածավալ ջանքերի գնով յուրացումն ու տեղայնացումը նոր մտածողություն և կենսակերպ են ձևավորում և զգալի փոփոխությունների հանգեցնում (Արմաշու 5-137): Այդ փոփոխությունները առաջին հերթին նկատելի են Արմաշի վանքում, իսկ հետագայում նույն վայրում կրթություն ստացած անձանց ծավալած գործունեությամբ՝ նաև այլ հաստատություններում:

Արմաշականության պատմությունը՝ մեզ հետաքրքրող իր սահմանով, կարող է պայմանականորեն բաժանվել երկու շրջանի՝ «մինչդպրեվանքյան» («Ղևոնդյան» վարժարանի շրջան) և «դպրեվանքյան» (1889 թ. «Դպրեվանքի» հիմնում): Մինչդպրեվանքյան շրջանում՝ ԺԹ դարից սկսյալ, լուսավորական շարժումների ազդեցությամբ այս վանական հաստատությունը կերպարանավորվում է ժամանակի

առաջադիմական գործիքներով՝ մամուլով, տպագրատնով, ժամանակակից առարկայացանկով գործող վարժարանով, դասավանդման նոր մեթոդներով: Այդկերպ մինչ այդ հայկական վանքերին հատուկ միջնադարյան գիտակարգերը (եռյակ կամ քառյակ գիտություններ) փոխարինվում են հիմնականում ֆրանսիական վարժարանների ուսումնական ծրագրերով: Այս և այլ հայկական վանքերի վարդապետներ սուրբգրային մեկնություններ և դավանական երկեր գրելու փոխարեն սկսում են աշխարհաքաղաքական վերլուծություններ հեղինակել և հետևել ժամանակակից փիլիսոփայությանը: Իսկ վանական ուսանողության մեջ սկսում են շրջանառվել եվրոպական լուսավորյալ մտավորականների թարգմանված և բնագիր հայտնի գործերը (Աշըխեան 1-32; Պօսիւէ 1-5):

Բուն «դպրեվանքյան» շրջանը, սկզբնավորվելով ԺԹ դարավերջին, ի թիվս այլ իրողությունների՝ հիմնականում աչքի է ընկնում լուսավորական շրջանից անցումով դեպի հետլուսավորականություն (կամ հասուն լուսավորականություն), որը մասնավորապես արմաշականության համար բնորոշելի է իր երկու գործիքներով՝ պատմաքննադատական մեթոդով արված ուսումնասիրություններով և վիպապաշտությամբ: 1889 թ.-ից, ժամանակի գիտական (քննական) մեթոդների համապատասխանությամբ, ավանդության հետազոտումը (հաճախ Վիեննայի կամ Վենետիկի Մխիթարյան հայ կաթոլիկ հայրերի նմանողությամբ) և վիպապաշտական գրվածքների հորինումը (թարգմանության դեպքում առավելապես ֆրասիացի վիպապաշտներին հետևելով) դառնում են Դպրեվանքի մտավոր գործունեության առանձնահատկությունները: Այս առանձնահատկությունները զարգանում են առաջնորդ ունենալով Մաղաքիա եպս. Օրմանյանին և Եղիշե վրդ. Դուրյանին, ինչպես նաև նրանց անմիջապես հաջորդած և այս ուղղության մեջ հաջողած վարդապետների սերնդին (Արմաշու 33-137): Այս հաստատության արդյունավոր կյանքն ընդհատում է Մեծ եղեռնը, որի հետևանքով տեղի մի շարք հայ մտավորականներ և ուսանողներ նահատակվում կամ գաղթում են, իսկ ոմանք Եղիշե եպս. Դուրյանի հետ տեղափոխվում են Երուսաղեմ՝ այդ ժամանակ Անգլիական կայսրության մի նոր գաղութ (Գուշակեան, *Եղիշէ Պատրիարք* 274):

Արմաշականությունը Երուսաղեմում և Տիրան արք. Ներսոյանը. 1921 թ.-ից Երուսաղեմի հայոց պատրիարքությունը թևակոխում է մի նոր փուլ, որում կարևոր դերակատարություն են ունենում արմաշական աստվածաբանական ավանդության ներկայացուցիչները: Նույն թվականին, երբ Եղիշե Դուրյանը գահակալում է որպես Երուսաղեմի պատրիարք, նրա և այլ վարդապետների գործունեությամբ նորովի է սկսում կազմավորվել Երուսաղեմի հայոց պատրիարքության Ժառանգավորաց վարժարանը՝ սկզբնապես հետևելով արմաշական կրթական ավանդույթին: Այստեղ նույն տարում ուսանելու է գալիս Այնթապից Հալեպ, իսկ հետո Երուսաղեմ գաղթած **Ներսես Թավուգճյանը** (հետագայում հայտնի որպես **Ներսես Տեր-Ներսեսյան**, իսկ ավելի ուշ՝ որպես **Տիրան Ներսոյան**) (Մանուկեան 7): Երեք մեծ ուսուցիչների՝ Եղիշե պտք. Դուրյանի, Թորգոմ եպս. Գուշակյանի և Բաբկեն եպս. Կյուլեսերյանի ազդեցությունն այստեղ անշրջանցելի է դառնում նրա համար ևս:

Տիրան արք. Ներսոյանի գաղափարային վաղ զարգացումը, որքան էլ ներշնչված արմաշականներից, այդուհանդերձ հատկապես Անգլիայում ուսանելուց ի վեր զգալիորեն փոփոխվում է: Նրա՝ աստվածաբանական և հարակից ոլորտների շուրջ գաղափարային վաղ զարգացմանը կարելի է հետևել «Սիոն» ամսագրում 1927-39թթ. հեղինակած գրվածքների միջոցով: Վերջիններս տարաբնույթ են. հայագիտական և միջեկեղեցական ոչ ընդարձակ տեղեկատվական հոդվածներ, եկեղեցական-տոնական ելույթներ, փորձագրություններ, գրախոսություններ, լուսաբանություններ, բանաստեղծությունների և գրքերի հատվածական թարգմանություններ, դամբանականներ և այլն: Դրանցում ի հայտ են գալիս գաղափարային և թեմատիկ այն ուղղվածությունները, որոնք հետագայում զարգանում և դառնում են Տիրան արք. Ներսոյանի աստվածաբանական գրվածքների բուն նյութը: Այստեղ նկատի են առնված հինգը՝

վիպապաշտությունը (և թարգմանությունը), եկեղեցաբանությունը, պատմա-քննադատությունը, եկեղեցու և քաղաքական հոսանքների հարաբերությունը և կանոնագիտությունը (**Քրիստոսաբանությանը**, որ առանցքային տեղ է զբաղեցնում Տիրան արք. Ներսոյանի աստվածաբանության մեջ, անդրադարձ է արվելու մեկ այլ հոդվածում, որտեղ մատնացույց է արվելու նրա՝ վաղ քրիստոսաբանության վրա անգլիական «աստվածյան բարեշրջության» (theistic evolution) ազդեցությունը):

Դառնալով հիշյալ թեմաներին՝ հստակեցնենք, որ Տիրան արք.-ի՝ աստվածաբանական և հարակից ոլորտների շուրջ գաղափարները, ձևավորվելով մտածողությունների բազմաբևեռ շրջանակում, սինկրետիկ չեն, այլ աչքի են ընկնում բազմաշերտ և միաժամանակ միագիծ բնույթով: Քննական լինելով՝ դրանք նաև քննադատական են, բայց ոչ հանուն սոսկ քննադատության, այլ հանուն առավել ավանդական և արդիական, այլ խոսքով՝ թե՛ անցյալին և թե՛ ներկային համահունչ և վավեր աստվածաբանության և եկեղեցու գործունեության:

Վիպապաշտությունը՝ արմաշական մտավորականության գլխավոր ուղղություններից մեկը, սկզբնապես գրավիչ է եղել նաև երիտասարդ Ներսես Թավուգճյանի համար: Հետուսանողական շրջանում «ՆԵՍԱՐ» ծածկանունով նա «Սիոն» հանդեսում թարգմանել և հեղինակել է մի քանի բանաստեղծություններ (հիմնականում՝ Հ. Պասկոլլիից, ՆԵՍԱՐ, *«Պատարագը»* 46; *«Մուրացիկ տղան»* 88; *«Բորոտը»* 122-124): Դրանք թարգմանվել են ոչ միայն արմաշական վիպապաշտական ավանդության հետևողությամբ, այլև յուրօրինակ վերաներկայացումն են Մեծ եղեռնի ժամանակ նրա ապրած իրադարձությունների (Թաւուգճեան 100-182): Դրանցում, ըստ երևույթին, արձագանքում են իր և իր ընտանիքի անցած ծանր ուղին, լքվածների և տառապյալների՝ հանրությունից մերժվածությունը, մահվան առաջ անօգնականությունը և այլն: Սակայն նույնիսկ հետագայում, հակառակ նրա կողմից հայ եկեղեցականության վիպապաշտական գործունեության նկատմամբ քննադատական կեցվածքի, նրա ուշ շրջանի ելույթներում և քարոզներում դարձյալ կարելի է հանդիպել բանաստեղծությունների և բանաստեղծականության: Այս առումով հարկ է նաև նկատել, որ նա առնչվել ու գնահատանքի է արժանացրել գրականության մեջ հայտնի հեղինակություններին՝ Հակոբ Օշականին (Տիրան վրդ.-ի տեսչության շրջանում հրավիրվել է Երուսաղեմ որպես դասախոս, Ղազարեան 145), Արշակ Չոպանյանին (Տիրան Եպիսկոպոս 61-62), Ռաֆայել Պատկանյանին (Վավերագրեր 327) և այլոց: Հետևաբար նա ոչ թե ընդհանրապես հակադրվել է վիպապաշտությանը, այլ վիպապաշտությանը՝ որպես հայոց եկեղեցու հիմնական գաղափարային ուղղություններից մեկը լինելուն կամ այն որպես ուղղություն զարգացնելուն:

Բանաստեղծությունների թարգմանությունը թեև գրական կարճատև ընթացք է Տ. Ներսոյանի ստեղծագործական կյանքում, սակայն թարգմանական գործունեությունը որպես այդպիսին հետագայում էլ մնում է նրա հետաքրքրությունների շրջանակում՝ տարածվելով մասնավորապես աստվածաբանական և ծիսական հին տեքստերի վրա: Այդպես, օրինակ, հայոց եկեղեցու Պատարագի գրաբարից անգլերենի թարգամանությունը և Պատարագին տրված ծանոթագրությունները ցայսօր մնում են նրա ամենահայտնի գործերից: Հայտնի են նաև նրա՝ գրաբարից անգլերեն թարգմանած՝ պսակադրության, մկրտության, ժամերգությունների և այլ արարողակարգերի հատորյակները: Նման մեկ այլ կարևոր գործ պետք է համարել վաղ միջնադարյան աստվածաբան Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն» երկի թարգմանությունը՝ գրաբարից անգլերեն, որը գուցե ոչ ավարտուն տեսքով պահվում է նրա ամերիկյան արխիվում (The Unpublished 48): Անկարևոր չէ նաև նկատել, որ նրա մի քանի սիոնյան գրախոսությունները փաստում են թարգմանությունների նկատմամբ նրա խիստ և բծախնդիր մոտեցումը (Ներսոյեան, *Գիտական շարժում* 398-399):

Նրա՝ եկեղեցաբանական և «էկումենիկ» վաղ հայացքները նույնպես ուրվագծվում են «Սիոն» ամսագրի մի քանի տեղեկագրական հոդվածներում և լուսաբանություններում: Օրինակ՝ անգլիկան եկեղեցու 1930 թ. Լամբեթի ժողովի մասին հոդվածում (Ներսոյեան, *Լամբեթի Համաժողովը* 308-312) ակնհայտ է նրա դրական մոտեցումը եկեղեցիների «ապակղզիացման» և «միության» ծրագրի, ինչպես նաև անգլիկան եկեղեցու և դրա վարած ռազմավարության նկատմամբ: Միևնույն ժամանակ, դժվար է այդտեղ հիշատակված միութենական տեսակետները և ընդհանրապես դրական մոտեցումը «էկումենիզմին» համադրել Տիրան վրդ.-ի սիոնյան այն լուսաբանությունների հետ, որոնցում նրա մոտեցումը ոչ ավանդական եկեղեցիների հանդեպ բավական կոշտ և արմատական է (Ներսոյեան, *ՍԻՈՆի Լուսաբանութիւնները* 361-362): Օրինակ՝ անդրադառնալով հայ ավետարանական եկեղեցուն՝ Տիրան վրդ.-ն այն դիտարկում է ընդհանուր ծայրահեղ բողոքականության շրջագծի մեջ («բողոքականությունը» մի եզր է, որ հիմնականում բացասական իմաստ ունի նրա նաև հետագա աշխատություններում) և նշում, որ «բողոքականները որոնք բազմապիսակ են, արդէն բառին բուն իմաստով եկեղեցի չունին» (Ներսոյեան, *ՍԻՈՆի Լուսաբանութիւնները* 362), կամ «բողոքականութիւնը Ս. Գիրքին բանէն և բառէն զատ ուրիշ ոեւէ հեղինակութիւն չի ճանչնար՝ քանի որ պատմական եպիսկոպոսութիւն չընդունիր և առաքելականութեան…սկզբունքը անհրաժեշտ չի նկատեր» (Ներսոյեան, *Մօր վէրքը չէ սպիացած* 4): Այս մոտեցումը, իհարկե, չի բխում ընդհանրապես Էկումենիկ շարժման տրամաբանությունից և սովորաբար չի կիրառվում բնորոշելու համար բոլոր բողոքական հարանվանությունները: Այս առումով կարելի է Տիրան արք. Ներսոյանի տվյալ մտքերին՝ Սիոնում Ֆ. Յ. Մ. ծածկանունով հակադրված անձի տեսակետները որոշ աստիճանի արդարացի համարել (Ֆրէտէրիք 58-60): Հետագայում՝ 1957 թ., Վազգեն կթղ.-ին գրած մի նամակում և այլուր Տիրան արք Ներսոյանը, շարունակելով այս մոտեցումը, դեռ քննարկման ենթակա հարց է համարում անգլիկան եկեղեցու եկեղեցաբանական կարգավիճակը՝ դարձյալ շեշտելով առաքելական հաջորդականության և այլ խնդիրներ (Վավերագրեր 445):

Սիոնյան հոդվածների շրջանում արդեն նկատելի են նաև Տիրան վրդ.-ի՝ եկեղեցաբանության սուրբգրային և հայրաբանական հենքի վրա զարգացող հայացքները: Հարկ է նաև նշել, որ Էկումենիկ շարժման մեջ որոշակի ներդրում արդեն ունեին երուսաղեմական երկու միաբաններ՝ Ղևոնդ Դուրեան և Թորգոմ Գուշակեան սրբազանները: Հայտնի է առաջինի մասնակցությունը Լամբեթի հիշյալ ժողովին (Ներսոյեան, *Լամբեթի Համաժողովը* 312) և երկրորդի՝ եկեղեցիների միության շուրջ Սիոնում տպված հոդվածները (օրինակ՝ Գուշակեան, *Հայ Եկեղեցւոյ հայեացքը* 39-42): Դառնալով եկեղեցաբանությանը՝ նշենք, որ հիշարժան է նաև Տիրան արք. Ներսոյանի հոր՝ Ներսես ավ. քհն. Թավուգճյանի՝ «Լոյս» շաբաթաթերթում տպված եկեղեցաբանական թարգմանական հոդվածաշարը (Թաւուգճեան, *«Եկեղեցի»* 369; 398; 462; 493 և մյուս համարներում):

Պատմաքննադատությունը, մասնավորապես հայոց պատմության վրա քննական (critical) մեթոդի կիրառումը, որ արմաշականների գլխավոր գիտական գործունեությունների է եղել (Արմաշու 59; 93; 94), Տիրան վրդ.-ի ուսումնասիրությունների և հետաքրքրությունների կարևոր բաղկացուցիչն է: Հայտնի է, որ Երուսաղեմում ուսումն ավարտելուց հետո նա մասնակցել է Մաղաքիա եպս. Օրմանյանի «Ազգապատում» աշխատության երրորդ հատորի պատրաստությանը (Վավերագրեր 787): Իհարկե, Սիոն ամսագրում Տիրան վրդ.-ի անունով հայտնի չէ պատմագիտական որևէ ծանրակշիռ աշխատություն, սակայն նրա մի շարք ուսումնասիրություններ հետագայում կառուցված են պատմաքննական մեթոդի բծախնդիր կիրառմամբ: Ի շարս այլոց՝ հիշատակելի են նաև նրա կյանքի միջին շրջանի պատմական ուսումնասիրությունները՝ «Հայոց եկեղեցու պատմության ընդհանուր թեմաներ» (Nersoyan, *Armenian Church* 63-90), «Պողիկյանները»

(Nersoyan, *Armenian Church* 99-108) և քրիստոնսաբանական և կանոնագիտական այլ հոդվածներ, որոնք նրան ներկայացնում են որպես պատմական հետազոտությունների մեջ հմուտ ուսումնականի: Արմաշական այս ուղղությունը նրա կողմից կարծես թե քննադատության չի արժանացել: Այս առումով Մաղաքիա պտք. Օրմանյանը, Եղիշե պտք. Դուրյանը, Բաբկեն կթղ. Կյուլեսերյանը՝ որպես պատմաքննադատական ուղղության մեջ վաստակաշատ հետազոտողներ, մշտապես դրվատելի օրինակներ են եղել Տիրան արք. Ներսոյանի համար:

Քաղաքական հոսանքների նկատմամբ եկեղեցու դիրքորոշման վերաբերյալ Տիրան արք. Ներսոյանի վաղ մտորումները նույնպես նրա գաղափարային համայնապատկերի կարևոր մասն են: Այդ առումով չի կարելի անտեսել «Ազգայնականութի՞ւն թէ աւետարան» վերնագրով «Սիոն»-ում տպված հոդվածը, որում նշմարվում են նրա վաղ մտորումները քաղաքական հոսանքների և եկեղեցու գործառույթների առնչությունների և տարբերությունների մասին (Տէր-Ներսէսեան 253-256): Դրանցում շեշտվում է եկեղեցու առաքելության և քաղաքական կամ պետական մարմնի գործունեությունների հստակ զանազանման կարևորությունը: Ուշագրավ է «ներգործական եկեղեցի» եզրը, որ նա կիրառում է մի քանի տարի հետո տպված իր մեկ այլ հոդվածում, որով ընդգծում է, թե եկեղեցին կոչված է ներգրավվելու միայն «իրեն վերաբերեալ գործերու մէջ» (Ներսոյեան, *Եկեղեցին և քաղաքական հոսանքները* 67)՝ այդպիսով թերևս որոշ չափով ենթադրել տալով, որ եկեղեցու գործառույթը քաղաքական չէ, բայց կրավորական էլ չէ ընդհանուր հարցերի նկատմամբ: Այս մոտեցումը զարգացում է ստանում նրա ավելի ուշ գրվածքներում, թերևս Ուիլյամ Թեմփլի (William Temple) և արևմտյան այլ մտավորականների նույն հարցի շուրջ գաղափարների ազդեցության ներքո: Եկեղեցու և պետության կամ քաղաքական մարմինների (կուսակցություններ) հարաբերությունը փիլիսոփայական և աստվածաբանական դրույթների վրա հիմնված հայեցակարգով նրա կողմից արտահայտվում է 1942թ. «Քրիստոնեական մի մոտեցում համայնավարությանը» (A Christian Approach to Communism) ջատագովական բնույթի գրքույկում (Nersoyan, *A Christian Approach* 9-103) («Ազգայնականութիւն թէ՞ աւետարան» հոդվածում է նաև, որ նշմարվում է «անաստվածության» (atheism) նկատմամբ նրա վաղ հետաքրքրությունը, որ հետագա աշխատություններում նույնպես կարևոր տեղ է զբաղեցնում): Արմաշականների համար եկեղեցու և ազգային հարցերի հարաբերությունը նույնպես կարևոր էր, և Բաբկեն եպս. Կյուլեսերյանի «Եկեղեցի և Պետութիւն» ու Թորգոմ եպս. Գուշակյանի «Բեթսամիւսէլի Սայլը» գրքերը և դրանց գաղափարները, իհարկե, խորթ չեն եղել նաև Տիրան արք. Ներսոյանի համար:

Կանոնագիտություն. Եղեռնից և Առաջին աշխարհամարտից հետո «Ազգ. սահմանադրության» և «Պոլոժենիայի» վերացմամբ հայոց եկեղեցու ներքին կյանքի կարգավորման անհրաժեշտություններից մեկը Տիրան վրդ.-ը իր վաղ գրվածքներում համարել է եկեղեցու կանոնների վերանայումը, դրանց համապատասխան կանոնադրության ստեղծումը և գործադրումը: Սա մի կողմից ուղղված է եղել հայոց եկեղեցու թեմերի «ապակենտրոնացման» դեմ, երբ, օրինակ, Իրաքի կամ Ռումինիայի հայկական համայնքների համար Էջմիածնից (Մայր Աթոռ) անկախ կանոնադրություններ են ստեղծվել (Ներսոյեան, *Կանոնագիր և օրինագիծ* 257-259): Մյուս կողմից, հայոց եկեղեցու համար կանոնական կարգավորումների անհրաժշտությունն ի հայտ է եկել, երբ թեմերում կամ համայնքներում առաջացած խնդիրները կարիք են ունեցել համարժեք լուծումներ ստանալու: Այս իրողությունը հետագայում փաստվում է նաև Տիրան արք. Ներսոյանի սեփական փորձով, երբ, ինչպես երևում է նրա արխիվային գրագրություններից, այն համայնքներում, որտեղ սպասավորել է, հաճախ եկեղեցական կանոնների բացակայության պատճառով խնդիրներ են ի հայտ եկել (The Unpublished 64-67): Կյանքի երկրորդ կեսին նա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ընդհանուր առաջարկով, մասնակցել է հայոց եկեղեցու կանոնադրության ստեղծմանը, ինչպես և սեփական նախաձեռնությամբ փորձել է

հայկական եկեղեցական կանոնագրքի քննական հրատարակություն պատրաստել (Վավերագրեր 401): Այս իրողությունը ևս արմատներ է առնում արմաշական ավանդությունից, մասնավորապես, եթե նկատի ունենանք Մաղաքիա եպս. Օրմանյանի՝ հայոց եկեղեցու կանոնագիտության և իրավունքի հարցերով հեղինակած աշխատությունները, Թորգոմ արք. Գուշակյանի Ժառանգաւորաց վարժարանում «Կանոնագիտութիւն» դասավանդելը, Բաբկեն եպս. Կյուլեսերյանի անտիպ «Կանոնագիտութիւն Հայոց Եկեղեցւոյ» աշխատությունը (Ակինեան 297) և այլն: Չնայած հայոց եկեղեցու համար ընդհանուր կանոնադրություն ստեղծելու Մայր Աթոռի փորձերը, որոնց զգալիորեն մասնակցել է Տիրան Ներսոյանը, մնացել են անավարտ, սակայն 1970-ականներին տարբեր օտար հանդեսներում նրա հեղինակած մի քանի ուսումնասիրություններ փաստում են եկեղեցական կանոնների տեսության և պատմության ոլորտում նրա կատարած մեծ աշխատանքի մասին (Nersoyan, *Armenian Church* 177-300):

Գործնական դրսևորումները, որոնք Տիրան վրդ.-ի որդեգրած մտայնությունների շոշափելի արդյունքն են, երևան են գալիս, երբ նա ստանձնում է Երուսաղեմի հայկական Ժառանգաւորաց վարժարանի և ընծայարանի տեսուչի (տնօրենի) պաշտոնը: Որպես Մեծ եղեռնի վերապրող և դրա հետևանքով ծառայող հոգևորական՝ նա, կարևորելով հոգևորականների ուսումնականությունը՝ համահունչ ժամանակի բարձր գիտությանը, նաև փորձել է եկող սերնդին պատրաստել ի վիճակի լինել Եղեռնից հետո ստեղծված աղետալի դրության մեջ օգտակարորեն գործելու: Քսանութ տարեկանում տեսուչի պաշտոն ստանձնելով՝ նա դասավանդման համար նոր, առավել գործնական բնույթի առարկաներ է ներմուծում՝ «Հովվական աստվածաբանություն», «Հոգևորական աստվածաբանություն», «Գործք Առաքելոց»-ի մեկնություն և այլն (The Unpublished 11-16) (Այս առարկաների դասատետրերից մի քանի օրինակներ պահվում են Երուսաղեմի հայոց պատրիարքության միաբանական արխիվում): Այսպես փորձ է արվել կենտրոնանալ եկեղեցու անդամների խնամքի, հոգևոր գործնական սպասավորության և եկեղեցու ոչ թե մեկուսացած ներքին, այլ դեպի դուրս առաքելության շեշտադրման վրա: Պարզ է, որ որպես տեսուչ՝ ոչ թե հակադրվելով արմաշականների «երկրորդ Վենետիկ» ստեղծելու երազանքին, այլ այն լրացնելով՝ Տիրան վարդապետը առաջնահերթություն է համարել եկեղեցականների օրվա պահանջներին համապատասխան կրթությունը:

Վերանայելով արմաշականությունը. Տիրան վրդ.-ի գրվածքների հիմնական թեմաները և զարգացրած ուղղությունները, ինչպես երևում է, առնված են արմաշական ավանդությունից: Սակայն սկզբունքային առումով դրանք միշտ չէ, որ համընկնում են և ներդաշնակության մեջ են այդ ավանդության հետ: Ավելին՝ «Սիոնում» կան նաև արմաշականությանն ուղղված քննադատական տողեր: Տիրան վրդ.-ի առաջին ընդգծված պաշտոնական հակադրությունը արմաշականությանն ի հայտ է գալիս նախ Բաբկեն կթող. Կյուլեսերյանի, իսկ հետո Թորգոմ պտք. Գուշակյանի մասին գրած դամբանականներում: Վերջինիս պատրիարքության շրջանում է, որ Տիրան վարդապետը ստանձնում է Սիոնի խմբագրի, իսկ հետո մի քանի տարի վարժարանի տեսչի և այլ կարևոր պաշտոններ: Սակայն չնայած տարիների համատեղ աշխատանքին՝ դատելով ներքոգրյալ մեջբերումներից՝ ակհնայտ է, որ Տիրան վրդ.-ը համակարծիք չի եղել Թորգոմ պատրիարքի զարգացրած գաղափարային որոշ ուղղությունների հետ: Նկատի ունենալով հատկապես Թորգոմ պատրիարքի գրվածքների վիպականությունը և ժամանակի առաջնահերթ խնդիրների նկատմամբ ոչ ընդգծված հակադիր կեցվածքը՝ Տիրան վրդ.-ը դրանք համարել է ոչ տեղին և թույլ, այդ ժամանակի համար նույնիսկ ավելորդ: Թորգոմ պատրիարքի մահվան մասին լուրը Ֆրանսիայում ստանալով՝ Տիրան վրդ.-ը ընդհանուր գծերով պատկերելով Արմաշի վանքի մեծանուն մտավորականների (այդ թվում՝ նաև Թորգոմ պտք. Գուշակյանի) գործունեությունը, գրում է.

«Իրողութիւնն այն է որ արմաշականութիւնը Հայց. Եկեղեցւոյն համար ինքնապաշտպանութեան զէնքեր ընտրեց զգայականութիւնն ու ողոքումը, փոխան բանաւորութեան, անկիւնադարձն ու լռութիւնը փոխան ճակատումի, տարածումն ու յարդարանքը փոխան կառուցումի, գոյներն ու թաւշութիւնը փոխան գծերու» (Ներսոյեան, *Սրբազան պերճախօսը* 86):

Այս տողերը թեև գրված են մահվան առիթով, և նույն տեղում հեղինակը նշում է, որ իր հոդվածը նկարագրական բնույթի է, սակայն քննադատական վերաբերմունքն ընդհանրապես արմաշականության նկատմամբ ակնհայտ է: «Ինքնապաշտպանութիւն», «ճակատում», «գծեր» բնորոշումները մատնանշում են, որ Տիրան վրդ.-ի աչքերում արմաշականությունը, սեփականը պաշտպանելու առիթներ ունենալով, առնվազն թույլ է հակազդել ժամանակի մարտահրավերներին՝ լոկ այդ պահի ազդեցիկ շարժումների հետևողականությամբ փորձելով մեղմագույն կամ շրջանցող լուծումներ տալ խնդիրներին: Այսպես անուղղակիորեն թիրախավորված է նաև վիպապաշտությանը տրված մեծ տեղը: Իսկ արդեն 1944 թ. նամակներից մեկում ավելի ընդգծված ցուցադրելով իր բացասական վերաբերմունքը գեղարվեստական գրականության գերակայության վերաբերյալ՝ Տիրան վրդ.-ը Միացյալ Նահանգներում սպասավորող իր մտերիմներից մեկին գրում է. «Կ՛աղաչեմ «Հայաստանեայց եկեղեցին» [Հյուսիսային Ամերիկայի Հայոց Եկեղեցու պաշտոնաթերթը, ծ. հ.] մաքրէ մինչև գամ բանաստեղծութենէ և պաղապուր քարոզներէ: Պատմութիւն և տրամաբանութիւն. ահա ինչ որ պէտք ունինք մենք: […]: Լաւ, իրենց հասկցած լեզուով կը գրենք մենք ալ: Կծու, շիտակ ոճով, և աղբանոց նետելով Գուշակեանի «Ճակատակաւորումի» սնանկաբանութիւնները» (The Unpublished 115): Հաշվի առնելով, որ սա անձնական նամակ է և չի կարող համարվել պաշտոնական դիրքորոշում, այդուհանդերձ ակնհայտ է, որ Տիրան վրդ.-ը հակակրանք է ունեցել արմաշականության գեղարվեստական և փափուկ ջատագովական մոտեցումների նկատմամբ, ինչը պաշտոնապես, այսինքն՝ դամբանականում, դրևսորել է հնարավորինս պատշաճ:

Թորգոմ պատրիարքի մահվանից երեք տարի առաջ Բաբկեն կաթողիկոս Կյուլեսերյանի դամբանականում Տիրան վրդ.-ը քննադատում է արմաշականության մեկ այլ մտայնություն, որ կոչում է «հավատալիքների հավատ»: «Վեհափառին հաւատքը **հաւատալիքներու վրայ նստած հաւատքի մը ձևն ունէր աւելի:** Այդ ձևը առած էր ան իր ժամանակէն: ԺԸ և ԺԹ դարերու Եւրոպական արդիականութեան շատ ուշ մնացած մուտքը մեր ազգին և Եկեղեցւոյ կեանքէն ներս՝ **ստեղծած էր** (հեղինակի այս ընդգծումները շեշտում են դրանց նկատմամբ իր վերաբերմունքը, ծ. հ.) այդ ձևը: Այդ ձևը ստեղծուեցաւ՝ կարծրութիւն մը, ընդդիմահարութիւն մը տալու համար մեր քրիստոնէական հաւատքին պատենազուրկ բանաւորական միջուկին, մեր անպաշտպան ու մերկ մնացած կրօնական դիալէկտիկային որուն վահանը փշրուած էր, գէթ մերիններուն ներքին ու չարդարացուած համոզումներուն մէջ, արևմտեան «գիտութեան» հովերուն բերած հարուածներէն» (Ներսոյեան, *Դամբանական. Իր Կրօնական աշխարհայացքը* 241-242): Այստեղ «հավատալիքների հավատքը» արտահայտությամբ թերևս նկատի է առնված ոչ թե Բաբկեն կթող. Կյուլեսերյանի «հավատքը», այլ նրա աշխարհայացքը, իրերին մոտենալու ձևը: Սա նաև անուղղակիորեն ակնարկում է պատմության ընթերցման կամ ուսումնասիրման և դրան հղվելու այն մտայնությունը (ոչ բուն պատմաքննադատությունը), որը դիտում է պատմական դեպքերը և միավորները որպես անցյալի՝ ճշմարտություն պարունակող հեղինակավոր իրողություններ: Դրանք բոլոր ժամանակների համար վավերականություն և խոր իմաստ ունեցող հղման կետեր են՝ հեղինակավոր անձինք, դեպքեր և երևույթներ: Ըստ այսմ, այդ «հավատալիքները» ներհյուսված են մարդկությանը (գիտակցությանը) և կարիք ունեն բացահայտման (տե՛ս, օրինակ, այդ ժամանակ հայտնի ֆրանսիացի պատմագետ Ֆյուսել դե Կուլանժի «La Cité antique» գրքի հատվածական թարգմանությունը Բ. Կյուլեսերյանի խմբագրությամբ

հրատարակվող «Լոյս» շաբաթաթերթի 1905 թ. 10-րդ համարում «Հոգիի և մահուան վրայ հաւատալիքներ» հոդվածը):

Տիրան վրդ.-ը այս դամբանականներում չի ընդարձակում կամ որոշակիացնում, թե ինչ պետք է լիներ քննադատված մոտեցումների փոխարեն: Սակայն հիշյալ դամբանականը աղերսելով նրա ավելի ուշ գրած մի նամակի հետ՝ կարելի է ասել, որ ըստ Տիրան վրդ.-ի՝ հայկական «բանաւորական միջուկ», «դիալէկտիկա» ունեցող իսկական աստվածաբանությունը որոշ պահի կանգ է առել (իմա՝ Ս. Ներսես Շնորհալուց անմիջապես հետո (Վավերագրեր 446): Այդ կանգը ոչ թե վերսկսվել, այլ փոխարինվել է ԺԸ/ԺԹ դարերի «եւրոպական արդիականութեան» ազդեցությամբ ստեղծված գիտակարգերով: Այլ կերպ ասած, Ս. Ներսես Շնորհալուն ուսումնասիրելը և ոչ թե նրան շարունակելը հենց այն է, ինչում վրիպել է Բաբկեն կթղ. Կյուլեսերյանը (ուրեմն՝ ժամանակի ուսյալ հոգևորականության զգալի մասը նույնպես): Հնարավոր է թերևս հենց այս տրամաբանության մեջ հասկանալ Բաբկեն կթղ.-ի աշխարհայացքը ըստ Տիրան վրդ.-ի լավագույնս բնութագրող «Աստուած հարցն մերոց» արտահայտության կիրառությունը հիշյալ դամբանականում (ի դեպ, այս նույն արտահայտությամբ, սակայն, հավանաբար ոչ ամբողջապես այս իմաստով, նրան բնորոշում է Ներսես վրդ. Ակինյանը վերջինիս մասին գրած իր դամբանականում (Ակինեան 289-291): Թեև կան նաև այլ տվյալներ, որոնք նույնպես վկայում են Տիրան վրդ.-ի՝ արմաշականության նկատմամբ քննադատական կեցվածքը, սակայն այսքանն արդեն բավական է այդ ցույց տալու համար (օրինակ՝ The Unpublished 43, 45): Արմաշական անվանի մտավորականների մահախոսականները գրելով՝ Տիրան վրդ.-ը ամփոփում է այդ ուղղությունը՝ նրանց համարելով «վերջին ներկայացուցիչներ»: Սակայն քննադատական երանգներով և անհամաձայնությամբ հանդերձ՝ նույն դամբանականներն առավելապես գնահատանքի և գովեստի խոսքեր են պարունակում:

Եզրակացություն

Վերոգրյալը սեղմորեն ամփոփում է Տիրան արք. Ներսոյանի գաղափարային ձևավորման միայն վաղ փուլը, որի ընթացքում ձևավորվել են նրա նաև հետագա ուսումնասիրությունների հիմնական թեմաները: Դրանք այս կամ այն կերպ կապված են նրա նախնական կրթության և միջավայրի հետ: Շարունակելով արմաշականության մեջ արդեն հայտնի ուղղությունները, ինչպես նաև քննադատելով և ընդարձակելով դրանք՝ նա յուրաքանչյուրում դրսևորել է նոր, սակայն հայ եկեղեցու ավանդությանը համահունչ մոտեցումներ: Այսպիսով, կարող ենք ասել, որ չնայած արմաշականության որոշ մոտեցումների վերաբերյալ նրա քննադատական դիրքորոշմանը՝ հենց արմաշական ավանդության մեջ են սաղմնավորվել և ձևավորվել այն հիմնական գաղափարները, որոնք հետագայում նրա ուսումնասիրություններում յուրօրինակ զարգացումներ ստացել: Հայ եկեղեցու իսկատիպ վարդապետությունն ու գործունեությունն են, որ ի սկզբանե փորձել է ջատագովել Տիրան սրբազանը՝ հաճախ հակադրությունների մեջ մտնելով և չհասկացվելով: Հուսանք, որ այդ ամենը հնարավոր կլինի վերլուծել մեր հաջորդ հոդվածներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ակինեան, Ներսէս վարդապետ. «Բաբգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ». *Հանդէս Ամսօրեայ*, 1936, VII, էջ 289-291:
2. Աշըխեան, Խորէն վարդապետ. *Խնդիր Արևելեան Եւրոպայի Արդի Վիճակին Մէջ.* Յարմաշ, 1876:
3. *Արմաշու Դպրեվանքին 25 ամեայ Յոբելեանին Առթիւ 1889-1914.* Նոր Տպարան, Պոլիս 1914:

4. Գուշակեան, Թորգոմ արքեպիսկոպոս. *Եղիշէ Պատրիարք Դուրեան (քահանայութեան յիսնամեայ յոբելեանին առթիւ).* Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 1932:

5. Գուշակեան, Թորգոմ եպիսկոպոս. «Հայ Եկեղեցւոյ հայեացքը եկեղեցիներու միութեան խնդրոյն նկատմամբ». *Սիոն*, 1927, Բ, էջ 39-42:

6. Թաւուգճեան, Ներսէս քահանայ. «Եկեղեցի», *Լոյս,* 1906, 16, էջ 369, 398, 462, 493 և մյուս համարներում:

7. Թաւուգճեան, Ներսէս Աւագ քահանայ. *Տառապանքի օրագիր.* խմբագրեց՝ Թ. Թորանեան, Պէյրութ, 1991:

8. Ղազարեան, Իսահակ ծ. վարդապետ. *Դէմքեր՝ որոնց հետ եկայ դէմ առ դէմ.* Կահիրէ, 1980:

9. Մանուկեան, Թորգոմ վարդապետ. *Տիրան Արքեպիսկոպոս Ներսոյեան Քահանայութեան 25-ամեայ Յոբելեանին Առիթով.* ՅԿՅ, Նյու Յորք, 1954:

10. ՆԵՍԱՐ. «Պատարագը», *Սիոն*, 1927, Բ, էջ 46:

11. ---. «Մուրացիկ տղան», *Սիոն*, 1927, Գ, էջ 88:

12. ---. «Բորոտը», *Սիոն*, 1927, Դ-Ե, էջ 122-124:

13. Պօսիւէ. *Յաղագս Ծանօթութեան Աստուծոյ և անձին*, թարգմ.՝ Առաքել Մ. Շարապխանեան. Յարմաշ, 1876:

14. *Վավերագրեր Հայ Եկեղեցու Պատմության, Գիրք ԺԲ, Տիրան Արքեպիսկոպոս Ներսոյան (1904-1989), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու.* կազմեց Սանդրո Բեհբուդյանը, Ս. Էջմիածին, 2004:

15. Տէր-Ներսէսեան, Ներսէս. «Ազգայնականութի՞ւն թէ աւետարան». *Սիոն*, 1928, Ը-Թ, էջ 253-256:

16. Տիրան Եպիսկոպոս. «Առաջնորդ Ս. Հօր Գրութիւնը Արշակ Չօպանեանի Յոբելեանի Առիթով» *Հայաստանեայց Եկեղեցի*, 1951, Բ, էջ 61-62:

17. Ներսոյեան, Տիրան Վարդապետ. «Սրբազան պերճախօսը». *Սիոն*, 1939, Գ-Դ, էջ 86:

18. ---. «Դամբանական. Իր Կրօնական աշխարհայացքը». *Սիոն* 1936, Ը, էջ 241-242:

19. ---. «Լամբեթի Համաժողովը». *Սիոն*, 1930, Ժ, էջ 308-312:

20. ---. «ՍԻՈՆի Լուսաբանութիւնները». *Սիոն*, 1930, ԺԱ, էջ 361-362:

21. ---. «Գիտական շարժում». *Սիոն*, 1930, ԺԲ, էջ 398-399:

22. ---. «Մօր վէրքը չէ սպիացած (Մայր Եկեղեցին և Հայբողոքականութիւնը)». *Սիոն*, 1931 Ա, էջ 4:

23. ---. «Կանոնագիր և օրինագիծ». *Սիոն*, 1931, Թ, էջ 257-259:

24. ---. «Եկեղեցին և քաղաքական հոսանքները». *Սիոն*, 1931, Գ, էջ 65-67:

25. Ֆրէտէրիք, Մուրատ. «Եկեղեցիներու տարբերութիւնները». *Սիոն*, 1931, Բ, էջ 58-60:

26. Nersoyan, Tiran. Armenian Church Historical Studies Matters of Doctrine and Administration, Compiled, with Introduction, by the Revd Nerses Vrej Nersessian, Routledge, 1998.

27. ---. A Christian Approach to Communism, Ideological Similiarities Between Dialectical Materialism and Christian Philosophy. Frederick Muller, London, 1942:

28. «Unpublished Writings of Tiran Nersoyan I Early Correspondence (1924-1944)». edited and translated by R. Ervine, St. Vardan Press, 2002.

WORKS CITED

1. Akinyan, Nerse's vardapet. «Babge'n A. At'or'akic Kat'oghikos Mec'i Tann Kilikioy», Hande's Amso'reay, ["Babgen A. Chair of Catholicos of the Great House of Cilicia", Handes Amsoreai,] 1936, VII. (In Western Armenian)

2. Ashy'xyan, Khoren vardapet. Xndir Arevelyan Yevropayi Ardi Vitchjakin Me'j, Armash, [A Problem in the Current State of Eastern Europe, Armash,] 1876. (In Western Armenian)

3. Armashou Dprevanqin 25 ameay Yobeleanin Ar't'iw 1889-1914, Nor Tparan, Polis [On the 25th anniversary of Armash's Dprevank, 1889-1914, Polis] 1914. (In Western Armenian)

4. Goushakyan, T'orgom arqepiskopos. Eghishe Patriarq Douryan (qahanayut'yan hisnamya hobeleanin ar't'iw), S. Yakobyanc, Erousaghe'm, [Yeghishe Patriarch Durian (On the Occasion of the Fiftieth Anniversary of the Priesthood), St. James, Jerusalem] 1932. (In Western Armenian)

5. Goushakian, T'orgom yepiskopos, . «Hay Ekeghecwoy Hayeacqy' ekeghecinerow miowt'ean xndroyn nkatmamb», Sion, [The Opinion of the Armenian Church on the Question of the Union of Churches] 1927, B. (In Western Armenian)

6. T'avougtchyan, Nerse's Avag qahana. Tar'apanqi o'ragir, xmbagrec` T'. T'oranean, Pe'yrut', [Diary of Suffering, edited by T. Toranian, Beirut,] 1991. (In Western Armenian)

7. T'avougtchyan, Nerse's qahanay. «Ekegheci», Loys, [The Church] 1906, (In Western Armenian)

8. Ghazaryan, Isahak ts. vardapet. De'mqer` oronc het ekay de'm ar' de'm, Kahire', [Faces with Which I Came Face to Face, Cairo,] 1980. (In Western Armenian)

9. Manoukyan, T'orgom vardapet. Tiran Arqepiskopos Nersoyean Qahanayut'yan 25-ameay Yobeleanin Ar'it'ov, YKY, New Yorq, [On the Occasion of the 25th Anniversary of the Priesthood of Archbishop Nersoyan of Tiran, YKY, New York,] 1954. (In Western Armenian)

10. NESAR. «Pataragy'», Sion, [Liturgy] 1927, B. (In Western Armenian)

11. --- «Mouracik tghan», Sion, [The Beggar Boy] 1927, G. (In Western Armenian)

12. --- «Boroty'», Sion, ["Leprosy] 1927, D-E. (In Western Armenian)

13. Po'siwe'. Yaghags C'ano't'owt'yan Astouc'o yev andzin, t'argm.` Ar'aqel M. Sharapxanyan, Yarmash, [Knowledge of God and Person, translated by Arakel M. Sharapkhanian, Armash,] 1876. (In Western Armenian)

14. Vaveragrer Hay Ekeghecu Patmut'yan, Girq JhB, Tiran Arqepiskopos Nersoyan (1904-1989), P'astat'ght'eri ev nyut'eri jhoghovac'u, kazmec Sandro Behbowdyany', S. E'jmiac'in, [Documents of the History of the Armenian Church, Book ZB, Archbishop Nersoyan of Tirana (1904-1989), a Collection of Documents and Materials, compiled by Sandro Behbudyan, St. Etchmiadzin] 2004. (In Armenian)

15. Te'r-Nerse'syan, Nerse's. «Azgaynakanut'iՙwn t'e' awetaran», ["Nationalism or Gospel",] Sion, 1928, Y'-T. (In Western Armenian)

16. Tiran Episkopos. «Ar'ajnord S. Ho'r Grut'iwny' Arshak Cho'paneani Yobeleani Ar'it'ov» Hayastaneayc Ekegheci, ["St. Father's Writing on the Occasion of Arshak Chopanian's Jubilee" Armenian Church,] 1951, B. (In Western Armenian)

17. Nersoyan Tiran vardapet. «Srbazan perchaxo'sy'», Sion, [The Holy Orator] 1939, G-D. (In Western Armenian)

18. ---. «Dambanakan. Ir Kro'nakan ashxarhayacqy'», Sion [His Religious Worldview] 1936, Y'. (In Western Armenian)

19. ---. «Lambet'i Hamajhoghovy'», Sion, [The Lambeth Conference] 1930, Jh. (In Western Armenian)

20. ---. «SIONi Lusabanut'iwnnery'», Sion, [The News of ZION] 1930, JhA. (In Western Armenian)

21. ---. «Gitakan sharjoum», [Scientific Movement] Sion, 1930, Jh'b. (In Western Armenian)

22. ---. «Mo'r ve'rqy' che' spiacac' (Mayr Ekeghecin ev Hay boghoqakanut'iwny')», Sion, [" Mother's Wound did not Heal; Mother Church and Armenian Protestantism] 1931 A. (In Western Armenian)

23. ---. «Kanonagir ev o'rinagic'», Sion, ["A Regulation and A Project of Law] 1931, T'.

24. ---. «Ekeghecin ev qaghaqakan hosanqnery'» Sion, ["The Church and Political Movements"] 1931, G. (In Western Armenian)

25. Frederick, Murat. «Ekeghecinerow tarberut'iwnnery'», Sion, ["Differences of Churches",] 1931, B. (In Western Armenian)

26. Nersoyan, Tiran. Armenian Church Historical Studies, edited by N. V. Nersessian, Routledge, 1998.

27. ---. A Christian Approach to Communism, Ideological Similiarities Between Dialectical Materialism and Christian Philosophy, Frederick Muller, London, 1942:

28. Unpublished Wiritings of Tiran Nersoyan I Early Correspondence (1924-1944), edited and translated by R. Ervine, St. Vardan Press, 2002.

THE EARLY PERIOD OF ABP. TIRAN NERSOYAN'S IDEOLOGICAL FORMATION AND THE THEOLOGICAL TRADITION OF ARMASH

SAMVEL POGHOSYAN
National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Philosophy, Sociology and Law, Ph. D. Student
Yerevan, the Republic of Armenia

This article outlines main themes of the early period of Tiran Nersoyan's writings. Based on his first articles, archival materials and some of his later works an attempt is made to show the general theological ideas that the author developed until the end of his life. The early romanticist, ecclesiological, historical-critical, canonical and ecclesial-political ideas and approaches of T. Nersoyan are examined. Reference is also made to the prevailing theological approaches of T. Nersoyan's time and environment, especially to Armash monastery theological tradition, from which he often drew his main themes, while freely criticizing Despite there are some works about the life and thoughts of T. Nersoyan, however, they pay too little attention to the main topics of his theology.

By creating a general picture of the development of T. Nersoyan's little-known ideas and showing the break with his tradition, this study prepares the ground for a deeper and more comprehensive approach to the concepts he explored and presented.

Keywords: *Tiran Nersoyan, Babken Kyuleseryan, Torgom Gushakyan, Armashianism, romanticism, ecclesiology, historical criticism, church and politics, church law.*

РАННИЙ ПЕРИОД ФОРМИРОВАНИЯ ИДЕОЛОГИИ АРХИЕПИСКОПА ТИРАНА НЕРСОЯНА И БОГОСЛОВСКАЯ ТРАДИЦИЯ АРМАША

САМВЕЛ ПОГОСЯН
аспирант Института философии, социологии и права Национальной академии наук Республики Армения,
Ереван, Республика Армения

В данной статье преставлены основные темы раннего периода творчества Архиепископа Тирана Нерсояна. На основе его первых статей, архивных материалов и некоторых поздних работ делается попытка показать общие богословские идеи, которые автор развивал до конца своей жизни. Рассматриваются ранние романтические, церковно-экклезиологические, историко-критические, канонические и церковно-политические идеи и подходы Т. Нерсояна. Внимание уделяется также преобладающим богословским подходам данного времени применительно к творчеству Т. Нерсояна, особенно богословской традиции монастыря Армаш, из которой он часто черпал свои основные темы, при этом свободно критикуя элементы содержания и метода. Несмотря на то, что существуют ряд работ о жизни и деятельности Т. Нерсояна, однако в них мало внимания уделено главным темам его богословского учения.

Создавая общую картину развития малоизвестных идей Т. Нерсояна и показывая разрыв с богословской традицией Армаша, данное исследование подготавливает почву для более глубокого и всестороннего подхода к концепциям, которые Т. Нерсоян исследовал и представлял. Ниже предпринята попытка обобщить и заново классифицировать главные темы и предпосылки их формирования.

Ключевые слова: *Тиран Нерсоян, Бабкен Кюлесерян, Торгом Гушакян, армашианство, романтицизм, экклезиология, историческая критика, политика, церковь, церковное право.*